

13

Օրագիր

Բրիտանական և Գերմանական
Բյուրո Գ Գ - անքի

2

F-13

1898

1214

376

1899. № 302.

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Զ. Դատարանի

ՆԵՐՍԻՍԵՆ ԸԶԳԵՅԻՆ ՀՈԳԵԻՈՐ ԿՊՐԸՆՈՅԻ.

(Ըաբ. 2 դաս.)

1897—98 ուս. տարի.

Կազմեց՝ Ա. ք. Բաղրատունի.

ИМПАТОРСКИ
ИНСТИТУТ
ВЪСТЪНОВЪДЕНІИ
Дружествомъ Наукъ
СССР



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Կ. Մարտիրոսեանցի || Типографія К. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 12.

1898

2
2-13

2001

010

949390

Дозвол. ценз. г. Тифлисъ, 9 апрѣля, 1898 г.

Մ Ր Ա Գ Ի Ր

Բ. Չ Ր Չ ա ն:

Նոր Օրէնք կամ Անեսարանական Ուխտ.

Ա. Տոմն.

- 1.) Նշանաւոր-Նիւնը—լրումն Հնոյն.
- 2.) Հասարակ-Նիւնը—Հնոյ վերայ գերազանց առաւելութեամբ.
- 3.) Կարեւոր-Նիւնը—իբրև Հիմք Հանրամարդկային բարօրութեան.
- 4.) Օգտակար-Նիւնը—իբրև Հիմնական սկզբունք Աստուածսիրութեան և ընկերսիրութեան.
- 5.) Համեմատան գիծ Հնոյ եւ Նորոյ մէջ—Հինը՝ սահմանափակ ազգայնական, սպառնական, պատժական. և այս երեքը՝ ի մի գումարեալ—Ակնկալ պատրաստողութիւն Հանդիպման Նորոյն, իսկ Նորը՝ անսահման մարդասիրական, աւետարանական, շնորհական կամ փրկագործական, և այս երեքը՝ ի մի գումարեալ—Ակնկալութիւն Հանդերձելոյն:



Հիմունք նոր Օրինաց կամ Աւետարանական Ուխտի
— Հաւատ, Յոյս, Աւեր:

Հ Ա Ի Ա Տ.

1.) Ծագումն — ստեղծագործութիւն մարդոյ. «'Ի քեզ Հաստատեցայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ. և առի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ:» «Հաւատն ծագեցաւ 'ի հոգևոր աշխարհի և 'ի մասնաւորի 'ի մարդկութեան սեռի յօրէ Արարչութեան աշխարհի և մարդոյ»: Քանական ճանաչումն քննութեամբ հաւատալեաց: «Հաւատացի, վասնզի քննեցի. քննեցէք և դուք, և հաւատայցէք»: Սուրբ գիրք. «Զի 'ի մանկութենէ զգիրս սուրբս զիտես. որք կարողք են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն, 'ի ձեռն հաւատոց' որ 'ի Քրիստոս Յիսուս»: Լուր և խօսք. «Ապա ուրեմն հաւատք 'ի լսելոյ են, և լուր' 'ի բանէն Քրիստոսի»: 2.) Խորհուրդ — Աստուածակոյս կողմանէ՝ գոյացութիւն մարդոյ — ազատ, իմացական և անմահ հոգևով 'ի պատկեր իւր և ի՛ նմանութիւն, իսկ 'ի կողմանէ մարդոյն՝ ձգտումն 'ի միաւորութիւն ընդ Աստուծոյ նմանելով նորան-Մտքով՝ իբրև Ամենաբարձր ճշմարտութիւն, կամքով՝ իբրև Ամենաբարձր Բարութիւն. Զգացմամբ՝ իբրև Ամենաբարձր երջանկութիւն. «Խորհուրդք հա-



ւատոյ ոչ են և ոչ կարեն լինել առարկայ Հետադրուութեան, այլ լոկ նիւթ արդեանց յընծայել անդ հաւատս նոցին»: «Եթէ ամենայն լինէր պայծառափայլ, ասն ինձ, ո՞ւր մնար հաւատ»: 3.) Նշանակումն — Աստուծոյ և մարդոյ մէջ. կարգալ ճննդոց գիրքը — Ա. 28—30: Բ. 21: Թ. 1—17: «Զաղեղն իմ եղից յամպս, և եղիցի 'ի նշանակ յաւիտենական ուխտին ընդ իս և ընդ ամենայն երկիր»: «Եւ արարից զքեզ յազգ մեծ. և օրհնեցից զքեզ. և մեծացուցից զանուն քո... և օրհնեսցին 'ի քեզ ամենայն ազգ երկրի»: Յուսացեալ իրաց հաստատութիւն: «Զինչ են հաւատք՝ եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն և յանդիմանութիւն որոց ոչն երևին»: Յաղթութիւն աշխարհի. «... և այս է յաղթութիւնն որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր»: 4.) Հաստատումն — Ուխտիւ. «Զուխտ յաւիտենական կացոյց ընդ նոսա»: Կարգալ սիրաբք ժէ. 1—10: «Եւ արդ՝ եթէ լսելով լուիցէք ձայնի իմում, և պահեցէք զուխտն իմ, եղիցիք դուք ինձ ժողովուրդ սեպհակոսն յամենայն ազգաց. զի իմ է ամենայն երկիր: Եւ դուք եղիջիք ինձ 'ի թագաւորութիւն, և 'ի քահանայութիւն՝ և յազգ սուրբ»: Աստուածային օրհնաստութեամբ. «Խօսեցաւ Տէր զամենայն պատգամս զայտոսիկ՝ և ասէ ...»: Կարգալ Ելեց գիրքը — Գլ. Ի. ցվերջն: Երեմիա — ԼԱ. 31—34: Եբր. — Բ. 8—13: Քրիստոսիւ. «Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատովք 'ի Քրիստոս Յիսուս»: 5.) Բաժանումն —

50492
36423-66

Քնածին և Աճեցուն. Կենդանի և Մեռեալ. «Տեսանեա՛ զի հաւատքն եղեն գործակիցք գործոց նորա. և ՚ի գործոց անտի հաւապքն կատարեցան»: «Զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է. սոյնպէս և հաւատք առանց գործոց մեռեալ են»: Կարգալ Յակ բ. 14—26: Հին Ուխտի կամ նախնական, Նահապետական, ընդօրինական և Նոր Ուխտի կամ Քրիստոնէական. «Աստուած ստեղծ յերկրէ զմարդն... և զարդարութիւն և զղատաստան իւր եցոյց նոցա» «Ես եմ Աստուած քո. հաճոյ լեր առաջի իմ և լեր անարատ»: «Գրեան դու քեզ զպատգամսդ զայդոսիկ. զի այդու բանիւ զնիցի ուխտ ընդ քեզ և ընդ իս»: «Քայց արդ առատագոյն ևս պաշտաման եհաս Յիսուս, որչափ լաւագոյն ևս ուխտի է միջնորդ՝ որ յառաւել աւետիսն օրինադրեցաւ»: Կարգալ Եբր—Ը. 6—13: 6.) Աստուծոյ համ Նիւ—Ն—Քովանդակութիւն Աստուածաշունչ—Սուրբ գրոց:

Գ. Տոմս.

Յ Ո Յ Ս.

1.) Ծագումն—Ստեղծագործութիւն մարդոց: Աստուած—«Իու ես՝ որ հաներ զիս յարգանդէ. յոյս իմ ՚ի ստեանց մօր իմոյ». Աստուած և կեանք—«Տէր, յոյս ՚ի մանկութենէ իմմէ. ՚ի քեզ հաստատեցալ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ». 2.)

Նշանակումն—Ակնկալութիւն կամ սպասողական դրութիւն անտեսանելոյն. «Յոյս տեսանելի՛ չէ յոյս. զի զոր տեսանէ ոք՝ զի ևս յուսայ». Համբերութիւն. «Ապա եթէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք, Համբերութեամբ ակն ունիմք». 3.) Կարեւորումն—Անյուսութիւնը կեանքի գոյութեան դէմ է, յոյսը գօրացնում է կեանքի գոյութիւնը յառաջադիմական ընթացք տալով նարան դէպի գործ, դէպի աշխատանք. «...զի յուսով պարտի, որ սերմանէն՝ սերմանել. և որ կասուն՝ յուսով վայելել»: 4.) Արդիւնք համ պարզ—Յուսոյ շնորհիւ ճանաչում է մարդ իւր կոչումը թէ աստ և թէ ՚ի հանդերձելումն—այն է՝ նմանութիւն Աստուծոյ. նոյն յուսով արժանանում է մարդ տեսնել Աստուծուն. յուսով ապրող մարդը կսրբուի մեղքից. «... զիտեմք, զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք. զի տեսանելոց եմք զնա՝ որպէս որ էն, և ամենայն որ ունի զայս յոյս յանձին՝ սրբէ զանձն իւր որպէս և նա սուրբ է»:

Գ. Տոմս.

Ս Է Ր:

1.) Ծագումն—Աստուած. «սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս. զի սէր լԱստուծոյ է, և ամենայն որ սիրէ՝ լԱստուծոյ է ծնեալ և ճանաչէ զԱստուած: Եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱստուած. զի Աստ-

ուած սէր է»։ «Մեք սիրեսցուք զԱստուած. վասն զի նախ նա սիրեաց զմեզ»։ Կարեկցութիւն և զթութիւն. «Եկնայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»։ Ընորհք և բարիք. «Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք 'ի վերուստ են իջեալք առ 'ի Հօրէն լուսոյ»։ 2.) Նշանակումն — Պատուիրանապահութիւն. «Այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք»։ Մէրը զիւրացնում է օրէնքի և պատուիրանի պահպանութեան ծանրութիւնը. «... և պատուիրանք նորա չեն ինչ ծանունք»։ Օրէնքի և պատուիրանի գլուխը՝ սէրն է. «գլուխ պատուիրանին սէր է, 'ի սուրբ սրտէ՝ և 'ի մտաց բարեաց՝ և յանկեղծաւոր հաւատոց»։ 3.) Զօրութիւն — յարատեող է, յուսացող է, հաւատաացող է, համբերող է. սիրոյ մէջ չկայ նախանձ, հպարտութիւն, չարամտութիւն, շահասիրութիւն. Մէրը միշտ կանգուն է և երբէք չի կործանուի. Սիրոյ ուժգին հեղեղի առաջ մարգարէութիւնք կխափանուին, լեզուները կլուեն, գիտութիւնները կխափանին «Ամենայնի տուէ, ամենայնի հաւատայ, ամենալին յուսայ, ամենայնի համբերէ»։ Մէր ոչ նախանձի, ոչ հպարտանայ. ոչ խորհի զչար. ոչ խնդրէ զիւր։ Մէր ոչ երբէք անկանի. եթէ մարգարէութիւնք իցեն՝ խափանեսցին, եթէ լեզուք՝ լուսցեն, եթէ գիտութիւն՝ խափանեսցի»։ 4.) Արքութիւն — Բնակարան Աստուծոյ. «Եթէ սիրեսցուք զմիմեանս՝ Աստուած 'ի մեզ բնակի»։ Հաւատոյ յա-

ջողութիւնը. «Հաւատք սիրով յաջողեալք»։ Սիրոյ հեղեղն էր՝ որ խոնարհեցրեց Աստուծուն մարդկան ազգի փրկութեան համար. «Գի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ։ մինչև զՈրդին իւր Միածին ետ»։ Մէրն էր՝ որ նահատակներ ռ վիաների հանգէս կազմեց և Մէրն է՝ որ կեանքը յառաջ է մղում դէպի զիտական և բարոյական բարգաւաճումն։ 5.) Նշանակումն — Յայտնաբերումն — «Յայտն գիտացեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք՝ եթէ սիրիցէք զմիմեանս»։

Ն. Տոմս.

ԻՆՆ ԵՐԱՆՈՒՔԻՆԸ:

ՀՈՒՆՈՎ ԱՂՔԱՏԻ:

1.) Փութակն — առաքինութեանց ճոխութիւն, բարեգործութիւն. իսկ մեղաց ճնշումն և նուազեցումն։ 2.) Կամար — խոնարհիլ և ջանալ ալոց բարեկեցութեան համար. «... վասն ձեր աղքատացալ՝ որ մեծատունն էր. զի դուք նորա աղքատութեամբն մեծաւոյրք»։ 3.) Ապարտութիւն — հատուցումն վնասուց կամ զրկանաց յօժարակամ. «Զկէս ընչից իմոց տաց աղքատաց և եթէ զոք զրկեցի՝ չորեքկին հատուցից»։ 4.) Հասարակական — Բարեաց է — Պարգէտայ — ամենայն մի բա-

րեզործ իւր արած կամ անելիք բարիքը չպիտի համարէ իւր սեպհականութիւն՝ այլ Աստուծոյ տուրք և բարիք. «Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք 'ի վերուստ են իջեալք առ 'ի Հօրէն լուսոյ...»: 5.) Անշնորհներն կամ Անշնորհներն — մարդը պարտական է ճանաչել իւր անձի տկարութիւնը և խոստովանել Աստուծոյ զօրութիւնը. «... զի զօրութիւն իմ 'ի տկարութեան կատարի. և արգ՝ լաւ ևս լիցի ինձ պարծիլ 'ի տկարութիւնս. զի բնակեցի լիս զօրութիւնն Քրիստոսի»:

Զ. Տոմս.

ՍԳԱԻՈՐՔ:

1.) Սոգ անշնորհներն — Մարդը պարտական է սգալ իւր անձը՝ իւր պակասութեանց, մեղաց և յանցանաց համար. բարոյական վիճակի անկման համար. խորհրդածէ զիշեր ու ցերեկ՝ թէ ինչպէս պիտի ուղղէ իւր պակասաւոր կողմերը. ինչպէս անառակ որդին՝ որ սգում էր իւր վիճակը. ինչպէս մաքսաւորը. «... Աստուած՝ քաւեա զի՛ զմեղաւորս». և անառակը. «... մեղանց յերկինս և առաջի քո. ոչ ևս եմ արժանի կոչիլ որդի քո...»: 2.) Սոգ յանշնորհներն — Մարդը պարտական է գայթակղուած և մեղքին ծառայ եղած ընկերի շինութեանն ու կանգման համար մտածել. սգալով նորա թշուառ վի-

ճակը. «... յանդիմանեան, սաստեա, մխիթարեա ամենայն երկայնատութեամբ»: 3.) Սոգ ընդհանուր հոգ անշնորհներն — Մարդը պարտական է սգալ հասարակաց անկեալ վիճակը, որովհետև ինքն էլ մինն է կազմում նորա անդամներից. «... զի ես դու աստ Եղիա: Եւ ասէ Եղիա. նախանձեցայ զնախանձ Տեառն Ամենակալի. զի թողին զքեզ որդիքն Իսրայէլի. զսեղանս՝ քո կործանեցին. և զմարգարէս քո կոտորեցին սրով». օր. Մովսէս — ոսկէ հորթի պաշտման ժամանակ և միշտ. Եղիա, Յուդիթ, Մուրթքէոս և Եսթեր. Վարդանանք. Մեծն Ներսէս, Սահակ Պարթև: Նոյնպէս և հասարակութիւնը պիտի սգայ իւր մի անդամի անկեալ վիճակը, որովհետև նա ևս կազմում է իւր ամբողջութեան մի մասը. և ուրեմն նորա վիշտը իւրն է, նորա բարոյական անկումը դարձեալ իւրն է: «Եթէ վշտանայ ինչ մի անդամն, վշտանան ամենայն անդամքն ընդ նմա»:

Է. Տոմս.

Հ Ե Ջ Ք:

1.) Հեղո-Նի-նը հոգու պարտանքից մեկն է — «Իսկ պտուղ հոգուցն այս է՝ սէր, խնդութիւն, խաղաղութիւն, համբերութիւն: Քաղցրութիւն, բարութիւն, հաւատ, հանդարտութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն, ճնշումն»: 2.) Երկրի ժողովուրդներն հեղեբներն է-

«Այլ որ հեզքն են՝ նոքա ժառանգեցեն գերկիր».
 սակայն այս ժառանգութիւնը կենդանեաց երկրի
 մէջ Աստուծոյ բարիքների վայելումն է ակնարկում
 քստ Սաղմոսերգուն. «Հաւատացի տեսանել զբարու-
 թիւն Տեառն յերկրին կենդանեաց». 3.) Հէրբը՝ Խէրբ-
 հոնգոստայր Աստուծոյ — «... ես յն հանգեաց. եթէ
 ոչ ՚ի հեզս և ՚ի խոնարհս...»: 4.) Հէրբը՝ Խէրբ-
 հոնգոստայր — խոնարհամիտները առհասարակ
 օժտուած են հեզութեան արժանայա ոկութեամբ. որ-
 պէս և մեծամիտները՝ բարկութեամբ. որովհետև
 Հպարտութիւնը բարկութեան արմատն է և Աստուած
 Հպարտներին հակառակ է. «Աստուած ամբարտաւ-
 նից հակառակ կայ». խոնարհներին սիրում է և
 շնորհաբաշխ է նոցա. «տայ շնորհս խոնարհաց». 5.)
 Համեմատման գիծ հէրբը՝ Խէրբ-հոնգոստայր
 օրինակներ՝ Քրիստոս և Հատավաճառներ. Քրիստոս
 և փարիսեցիք. Քրիստոս և Մաղքոս. Յովհաննէս
 Մկրտիչ և փարիսեցիք ու Սաղուկեցիք. Յովհաննէս
 Մկրտիչ և Հերովդէս. Մովսէս և Հորթապաշտ Իս-
 րայէլացիք:

Ը. Տոմս.

ՔԱՂՅԵԱԼՔ ԵՒ ԾԱՐԱԽԻՔ ԱՐՔԱՌԻԹԵԱՆ:

1.) Արիւն է Բնո-նիւն Տարբոյ Հրիւն՝ Կերպոսը նորս
 — Հոգևոր և Մարմնաւոր. մարմնաւորն՝ ՚ի սնունդ մար-

մնոյն և ՚ի փառս Աստուծոյ. «... և առեալ զկերա-
 կուր՝ զօրացաւ». «ճաշակեցէք և տեսէք զի քաղցր
 է Տէր». Հոգևորն՝ ՚ի սնունդ Հոգւոյն. «Ես արդա-
 րութեամբ երևեցայց երեսաց քոց. յագեցայց՝ յերևիլ
 փառաց քոց». Յիսուսի խօսքը. «Ծարաւի եմ». չէր
 ծարաւ ջրոյ տարրական, որպէս Հրէայք մեկնեցին.
 այլ էր ծարաւ մարդկան ազգի Հոգւոյ փրկութեան:
 2.) Քաղցր է ծարաւը չէ՛ յիշուած Տարմնայանի Համար.
 որ Հորստայն է, այլ հագե-որի Համար. որ է Համար Աս-
 տուծոյ է նորս Հասարակը, որ մտած է հա-նիւնայանի
 Կէանսի մէջ. «Երթայք գործեցէք մի զկորստական կե-
 րակուրն, այլ զկերակուրն՝ որ մնայ ՚ի կեանսն յա-
 վտենականս...: Իմ կերակուր այն է՝ զի արարից
 զգործն նորա»: 3.) Արարտու-նեան արդեալ՝ Հարստու-
 են գործնայան իմաստու-նեան, Խէրբ- Բնոյրագոյն իրի. Խն-
 ոյն — Արարտու-նեան Կէանս է գործս Բարիս. Խն ծարաւիս
 Հարստու-նեան արարտու-նեան, Խէրբ- անարագոյն
 Խն-նի. Խնոյն — Գիտու-նիւն Աստուծոյն օրինաց է հա-
 մայ. «Որվ իցէ իմաստուն և Հանճարեղ ՚ի ձեզ. ցուցցէ
 ՚ի բարուք գնացից զգործս իւր...: «Որ ինդրէ զՏէր,
 գտցէ զգիտութիւն արդարութեամբ Հանդերձ»: «... զի
 դու զգիտութիւն մերժեցեր. մերժեցից և
 ես զքեզ...»: «Գնալ ձեզ արժանի Տեառն յամենայն
 Հաճութեան, յամենայն գործս բարութեան պտղա-
 բերք և աճեցունք գիտութեամբն Աստուծոյ»:

Թ. Տոմս.

Ո Ղ Ո Ր Մ Ա Ծ Ք:

1.) Աստուածանմանութիւն ճշմարիտ ողորմածի—
 ճշմարիտ ողորմածը նման է Աստուծոյ ողորմութեան
 գործում. որովհետեւ ողորմում է հաւասարապէս և
 առանց ակնկալութեան հատուցմանց—(փառքի, գո-
 վասանքի, անուան հոչակի և վաշխառութեան.)
 «... զի զարեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և
 բարեաց, և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մե-
 ղաւորաց»: «Այլ դու յորժամ առնիցես զողորմութիւն,
 մի՛ հարկաներ փող առաջի քո. որպէս կեղծաւորքն
 առնեն 'ի ժողովուրդս և 'ի հրապարակս, որպէս զի
 փառաւորեսցին 'ի մարդկանէ»: «... քանզի և մե-
 ղաւորք մեղաւորաց փոխ տան, զի առցեն անդրէն
 զկշիռն»:

2.) Ճշմարիտ ողորմածը չէ հպարտանում և նորա սիրտը
 չէ ալեկոծուում փառքի տենչանօք. այլ ընդհակա-
 ուակը՝ մխիթարուում է միայն, որ կատարում է իւր
 պարտքը և այդ մխիթարութիւնը խաղաղութիւն է
 պարգևում նորա սրտին. «Այլ դու յորժամ զողորմու-
 թիւն առնիցես՝ մի՛ զիտասցէ ձախ քո՝ զինչ գործէ
 աջ քո». այլպիսի ողորմութիւնը ծածուկ պիտի լինի
 ոչ մարդկանցից՝ այլ սրտի մեծամիտ գրգռմունքնե-
 րից: 3.) Աստուածանմանութիւնը փրկանք է կենաց—'ի

սրտէ արած ողորմութիւնը այնքան շնորհունակ է և
 ընդունելի Աստուծոյ առաջ՝ որ փրկում է ողորմածին
 և՛ մարմնաւոր և՛ հոգեւոր մահից. օր. Աբրահամ,
 Արդար Յօբ. Տովբիթ. «Ջի ողորմութիւնք փրկեն 'ի
 մահուանէ. և ոչ տան մտանել 'ի խաւարն»: 4.)
 Հոգեւոր ողորմութիւն—'իւրաքանչիւր ոք պարտական
 է, եթէ ունի յօժարութիւն Ողորմածաց երանին լսե-
 լու, ընկերի հոգեւոր պակասութիւններին կարեկցու-
 թեամբ հասնէ—սաստէ, յանդիմանէ, խրատէ. որ-
 պէս զի կարողանայ հեռացնել նորան զայթակղու-
 թեան և յանցանքի ճանապարհից կամ սովորութիւն-
 ներից. «Եւ դու քարոզեան զբանն. հաս 'ի վերայ. 'ի
 ժամու և 'ի տարաժամու. յանդիմանեան, սաստեան,
 մխիթարեան ամենայն երկայնատութեամբ և վարդա-
 պետութեամբ»: «Ո՞ հիւանդանայ՝ և ոչ ես հիւան-
 դանամ. ո՞ զայթակղի՝ և ոչ ես տապանամ»: 5.)
 Մարմնաւոր ողորմութիւն—'իւրաքանչիւր ճշմարիտ ողոր-
 մած հասնում է ընկերի և նիւթական պակասու-
 թեանը—տալով քաղցածին՝ հաց, ծարաւին՝ ջուր,
 օտարին կամ պանդխտին՝ յարկ և պատսպարան,
 մերկին՝ հանդերձ, հիւանդին՝ մխիթարական այցե-
 լութիւն, բանտարկեալին՝ զղջման խօսք, յուսադրա-
 կան յորդոր. և ամենատեսակ վաստակեալներին ու
 բեռնաւորներին՝ օգնութիւն ըստ վիճակի և հանգա-
 մանաց. «Եւ 'ի գործս բարիս վկայեալ. եթէ ման-
 կունս անուցեալ իցէ, եթէ զհիւրս ընկալեալ իցէ,
 եթէ զորբոց զօտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բա-

ւական լեալ իցէ...»: «Զի քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել, ծարաւեցայ՝ և արբուցիք ինձ, օտար էի՝ և ժողովեցիք զիս: Մերկ՝ և զղեցուցիք զիս, հիւանդ էի՝ և տեսիք զիս, ի բանտի էի՝ և եկիք առ իս»:

6.) Աղորձածու-Քեան պայճանները — Աշմարիտ ողորմածը իւր, թէ՛ նիւթական կամ մարմնաւոր և թէ՛ բարոյական կամ հոգեւոր, ողորմութիւնը պիտի անէ նախ անձին և ապա միայն ընկերին. նախ ինքը պիտի վաստակէ՝ որ յետոյ իւր վաստակից մասն հանէ ընկերին. որովհետեւ՝ ինչպէս որ ընչիւք փարթամը առաւել միջոց ունի հասնելու և՛ իւր անձին և՛ ընկերին՝ նոյնպէս և՛ մտուոր և՛ հոգեւոր արժանիքներով պերճացեալն ու բարգաւաճեալը միայն կարող է ողորմել կամ օգնել աղքատին և բարոյական կամ հոգեւոր հիւանդին. որովհետեւ նա նախապէս իրեն է օգնել. այսինքն՝ ձեռք բերել նիւթական, մտաւոր և բարոյական քանքարներ և ունի հեղինակութիւն. «Յրնչից քոց առնիցես զողորմութիւնս...»: «Մասնիկ բարւոյ տրոյ զքեւ մի անցանիցէ»: «Օրէնսդէտ արա զիս Տէր՝ ի ճանապարհի քում. առաջնորդեան ինձ՝ ի շաւիղս քո ուղիղս...: Խորհեցայ՝ ի ճանապարհս իմ և դարձուցի զօտս իմ՝ ի վկայութիւնս քո...»: «Մատիցէ այր՝ ի խորութիւն սրտի իւրոյ, և բարձր եղիցի Աստուած»: «Ծանիր զքեզ»:

Փ. Տոմս.

ՍՈՒՐԲ ՍԻՐՏ:



1.) Պահպանութիւն սրտի — Իւրաքանչիւր խոհական մարդ մեծ խնամքով պիտի վերաբերի զէպի իւր սրտի պահպանութիւնը. որովհետեւ սիրտն է կեանքի աղբիւրը և այնտեղ են սերմանուում և շտեմարանուում բարի և չար խորհուրդք և մտածութիւնք, նոյն սրտումն են յղանում, ծնուում, աճուում, զարգանում նոյն խորհուրդք և այնտեղից ելնելով՝ մարմնանուում են կեանքի մէջ. «Ամենայն պահպանութեամբ պահեան գտիրտ քո. զի ՚ի սոցանէ են ելք կենաց»: «Զի ՚ի սրտէ ելանեն խորհուրդք չարք սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հաշտոյութիւնք»: «Մարդ բարի՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս. և մարդ չար՝ ՚ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս»:

2.) Սրտի պահպանութեան պայճանները — Ա. Սիրտը բարեխնամ պահպանող անհատը՝ իւր սիրտը պիտի տայ Աստուծուն, այսինքն՝ ինչ որ հաճոյքն է Աստուծոյ՝ այն պիտի գանձէ իւր սրտի մէջ, սրտի մէջ մի անկիւն իսկ չպիտի յատկացնէ այնպիսի հաճոյքներին՝ որոնք հակառակ են Աստուծոյ հաճոյքին. «Տուր ցիս որդեակ զսիրտ քո»: Բ. Սիրտը բարեխնամ պահպանող անհատը՝ իւր սիրտը պիտի ենթարկէ ամենօրեայ անա-



չառ քննութեան. և պիտի մաքրէ սրտի ծածուկ ու միտին խորշերը անցնելու ախտերից՝ որոնք գաղտագողի սահել-մտել են այնտեղ և բուն են դրել. այդպիսի եկամուտ ախտերն են ակամայ և պատահական մեղքերը, որոնք դուրս են սպրդում քննական ուշադրութիւնից, իբրև թեթև և ներելի մեղքեր կամ յանցանքներ. որովհետև եթէ այդպիսիք չենթարկուին քննական ուշադրութեան կամ հալածանաց՝ յայնդէպս կարող են աճիլ, զարգանալ և տիրել սրբտին, դառնալով ունակութիւն, սովորութիւն և միջնակ իսկ բնութիւն. «Տճուր 'ի խրատ գսիրտ քո»:
 «Մատիցէ այդ 'ի խորութիւն սրտի իւրոյ և բարձր եղիցի Աստուած»:
 «Ես ննջեմ և սիրտ իմ արթուն կայ»:
 «խօսեցայ 'ի գիշերի ընդ սրտի իմում. հոգայի և տառապիւր լիս հոգի իմ»:
 Գ. Սիրտը բարեխնամ պահպանող անհատը՝ իւր սիրտը ուղիղ և իմաստուն ճանապարհով պիտի առաջնորդէ. այսինքն՝ աւելի շուտ վշտերին և սուգին պիտի վարժեցնէ, քան թէ ուրախութեանց և զեղխութեանց. սրտի ընթացքը, որ հաւանականօրէն, դէպի շռայլն ու զեղխն է հակամէտ՝ պիտի կանգնեցնել և ճանաչեցնել նորան իրաւունքի սահմանը, որից անցնելը՝ յառաջ է բերում իմաստուն ճանաչման ամենաօխերիմ թշնամին որ է պարտազանցութիւնն ու մեղքը. «Սիրտ իմաստալնոյ 'ի տուն սգոյ և սիրտ անմտի 'ի տան ուրախութեան»:
 «Զժամանակ իրաւանց ճանաչէ սիրտ

իմաստնոյ»:
 Իմաստուն սիրտ 'ի բաց քարշեսցէ գինքըն 'ի մեղաց»:
 Գ. Սիրտը բարեխնամ պահպանող անհատը՝ իւր սիրտը մանկական պարզութեամբ պիտի պահէ. ինչպէս անմեղ մանուկը լի յուսով, լի սիրով, լի հաւատով է վերաբերում դէպի իւր ծնողը՝ այնպէս և իւրաքանչիւր անհատ, ունենալով այդ մանկական սիրտը՝ նոյնպէս կվերաբերի դէպի Երկնաւոր ծնողութիւնը, որի ծնողական խնամքը ամենայն օր վայելում է ինքը. ինչպէս անմեղ մանուկը պարզաբար, սրբութեամբ և հաւատարմութեամբ է վերաբերում դէպի ամենայն մի անհատ՝ նոյնպիսի սուրբ և անմեղ սրտով պիտի վերաբերուի և իւրաքանչիւր անհատ դէպի ամենայն ոք. մեծ հոգածութիւն պիտի ունենալ՝ չկեղծելու սրտի սրբութիւնը և չգաւաճանել սրտին. որովհետև Յիսուս մանկական սիրտը վերցրեց իբրև չափ արքայութեան: «Եթէ ոչ դարձչիք և եղիչիք իբրև զմանկտի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից»:
 «Հաստատել գսիրտս ձեր անարատս 'ի սրբութիւն առաջի Աստուծոյ»:
 «Այլ յերիտասարդական ցանկութեանց փախիր... և երթ ընդ այնոսիկ, որք կարդան զանուն Տեառն սուրբ սրտիւ «Եղիցի սիրտ իմ անբիծ յարգարութեան քում»
 Ե. Սիրտը բարեխնամ պահպանող անհատը՝ իւր սիրտը զթով ու կարեկցութիւնով պիտի լցնէ. որովհետև գութն ու կարեկցութիւնը հալածում են ազտեղի մտածութիւնք գթոտ ու կարեկից անհատը ընդա-

ներար է նայում ամեն մի իւր նմանին. և ուր կայ ընտանի հարազատութիւն՝ այնտեղից միշտ հալածական են աղտեղի խորհուրդք և գործք. ընտանի հարազատութեան ծաղիկներն են գութը, կարեկցութիւնը, ողորմութիւնը, հաւատը, սէրը, յոյսը, ճշմարտութիւնը և համարձակութիւնը Աստուծոյ առաջ. «...մի խստացուցանէք զսիրտս ձեր...» «Ողորմութիւն և հաւատք ՚ի քէն մի պակասեցին... և զըրեան զնոսա լընդարձակութիւն սրտի քո»: «Որ ունիցի զկամս ինչ յաշխարհիս՝ և տեսանիցէ զեղբայր իւիք՝ և փակիցէ զգութն իւր ՚ի նմանէ, զի անրդ սէրն Աստուծոյ ՚ի նմա իցէ բնակեալ: ...մի բանիւք և լեզուիք սիրեսցուք. այլ արդեամբ և ճշմարտութեամբ: Եւ այսուիկ լիցուք ծանուցեալք՝ եթէ ՚ի ճշմարտութենէ անտի իցեմք. և առաջի նորա արասցուք զհանդէս սրտից մերոց... եթէ սիրտք մեր զմեզ ոչ ստուգանիցեն, զհամարձակութիւն ունիմք առ Աստուած».

3) Սրբի պահպանութեան արդիւնքը — Սիրտը պահպանելով բարի գանձուց համար՝ որք են — Սրբութիւն, Մանկական անմեղութիւն, և մաքրութիւն, զթոյ և կարեկցութեան լիութիւն, սիրոյ առատութիւն, իմաստութիւն, և ուղղամտութիւն, Քննութիւն և արթնութիւն, Յոռտով և Հաւատով սպառազինութիւն՝ մարդս արժանանում է Աստուածտեսութեան Երանական Աւետեացը: Թէպէտ ըստ Մովսիսի. «...ոչ

կարես տեսանել զերեսս իմ. զի ոչ տեսանէ մարդ զերեսս իմ՝ և ապրի», և ըստ Յովհաննու. «զԱստուած ոչ ոք ետես երբէք. բայց Միածինն Որդի՝ որ է ՚ի ծոց Հօր, նա պատմեաց». սակայն Յիսուս, Սուրբ սիրտ ունեցողներին, Աստուծոյ տեսութեան արժանանալու երանական աւետիքն է տալի: Այս երանական աւետիքն այսպէս պէտք է հասկանալ — որ ինչպէս մարդը ՚ի նմանութիւն և ՚ի պատկեր Աստուծոյ է ստեղծեալ. և սակայն նման չէ ըստ մարմնոյ. որովհետեւ Աստուած անմարմին է. այլ հոգւոյ կարողութիւններով պիտի ձկտի նմանել Աստուծուն. նոյնպէս և մարմնաւոր մարդը չէ կարող տեսնել անմարմին Աստուծուն. բայց երբ կարող է տեսնել և ուր. քանի որ Յիսուսի երանական աւետիքը հիմնուած է անսուտ ճշմարտութեան վերայ: Այսպէս և եթէ պատշաճաւոր է պարզաբանել այս խորհրդաւոր երանական աւետիքը — որ մարդը՝ Աստուծուն, Նորա բոլոր կատարելութիւններով, պիտի ձկտի տեսնել տիեզերքի մէջ. ուր նա միշտ երևում է իւր Երկնքով և երկնալիններով և իւր երկրով և երկրայիններով. բայց երևում նրանց՝ որոնք ունին Սուրբ սիրտ, Մանկական անմեղ և ամբիժ սիրտ, արդիւնաւորուած ու պտղաբերուած Աստուածատեսութեան աւետեաց համապատասխան արժանայատկութիւններով. այդ արժանիքն են՝ որ կազմում են Սրտի բարի գանձերը. (Մարդ բարի՝ ՚ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ

ղբարիս): Այդպիսիք են՝ որ միշտ հոգևոր, մտաւոր
 և մարմնաւոր աչքով իսկ տեսնում են Աստուծուն,
 Նորա հրաշակերտի մէջ. ինչպէս Եղիան՝ Քորեբի
 վերայ տեսաւ Աստուծուն, ո՛չ հոգմի կամ մրրկի, ո՛չ
 երկրաշարժի, ո՛չ կրակի, այլ մեղմ սիւզի մէջ. և երբ
 Աստուածատես մարդիկ կանջատուին մարմնից և հո-
 գեղէններին կհամադասին՝ յայնժամ դէմ յանդիման
 կտեսնեն, որովհետև անմահ կլինին:

ԺԱ. Տոմս.

ԽԱՂԱՂԱՐԱՐՔ

1) Խաղաղարար լինելը գրեթէ բոլորից է պահանջում
 — խաղաղարարը իւր պարտքը կատարելուց առաջ,
 պիտի հրաժարուի իւր շահից, մինչև իսկ իւր կեան-
 քից. որովհետև շատ կարելի է՝ որ խաղաղարարու-
 թեան փափագելի մրցանակը տանելու համար հար-
 կաւորուի կեանքով զոհուելը. այդպէս չէր մտածում
 արդեօք Աբրահամը, երբ երեք հարիւր հովիւ ծառա-
 ներով վստահանում էր ճակատ տալ պատերազմական
 զինավարժ մարտիկ գնդերին. նոյն Աբրահամը չգո-
 հնց Դավտին իւր շահը, միայն խաղաղութեան ցան-
 կալի նպատակին հասնելու համար. Յիսուսը չգոհնց
 Իրան խաչի վերայ, որպէս զի խաղաղութիւն ձգէ
 երկնքի և երկրի, Աստուծոյ և մարդկան մէջ. և
 հրեշտակները չէին՝ որ առաջին օրհներգական աւէ-

տաբերք եղան այդ խաղաղութեան. «Փառք ՚ի բար-
 ձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն»: 2) Խա-
 ղաղարարի պայմանը — Իւրաքանչիւր ոք պիտի ձկտի խա-
 ղաղարար լինել նախ իւր անձին և ապա միայն
 ընկերին. իւր անձին — որ ինքը իւր ներքին մարդը
 պիտի հաշտեցնէ արտաքին մարդի հետ. ներքինով —
 մանկական սրտով և ուղիղ հոգով պիտի կապուի
 արտաքինի հետ — սրբութեամբ նայէ ամենի վերայ և
 խաղաղացնէ իրան յուզող ու շփոթող կիրքերը: Երբ
 իւր անձի մէջ կտիրէ խաղաղութիւնը՝ այն ժամա-
 նակ միայն կարող է խաղաղարար լինել և ուրիշ
 ամբարիշտների համար. որովհետև իւր խաղաղարար
 կեանքը կնպաստէ իւր հեղինակութեանը: Ուրեմն խա-
 ղաղարարութեան պայմանն է — որ իւրաքանչիւր ոք
 խաղաղարար լինի նախ իւր անձին՝ ՚ի հոգի, ՚ի սիրտ
 և ՚ի խղճմտանս, և ապա միայն դիմէ խաղաղարար
 լինել անբարիշտներին: «Ինդրեան զխաղաղութիւն, և
 երթ զհետ նորա»: «...զխաղաղութիւն արարէք, և
 Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ»: Երկրորդ
 պայմանն է — Ներողամտութիւն և Զիջողու-
 թիւն. «Մի կալ հակառակ չարին»: «...ոչ ասեմ քեզ՝
 թէ մինչև ցեօթն անգամ. այլ մինչև ցեօթանաս-
 նեկին եօթն». ուրեմն ամբողջ կեանքի ընթացքում
 ներողամտ պիտի լինի մարդ, եթէ ցանկանում է
 խաղաղարար լինել: Սակայն պայմանաւոր է այս
 խօսքը. նախ՝ որ հոգևորի և բարոյականի թշնամի

ամբարշտին զիջանելը անխորհուրդ է և վնասակար. իսկ մարմնաւորի կամ նիւթականի թշնամի անբարըրշտին զիջանել հարկաւոր է. խաղաղութիւն ձգելու նպատակով. սակայն և այս դէպքում իսկ ոչ ամեն ժամանակ և ոչ ամենքին անխտիր. որովհետև շատ անխորհուրդ կլինի ներողամտութիւնը կամ Զիջողութիւնը այն դէպքում՝ երբ ամբարիշտը չբաւականանալով այս խաղաղարարի մարդարիտները ոտնատակ տալը՝ յանդգնում է երկրորդին, երրորդին ևս հարուածել, որովհետև առաջինից զիմադրութեան չբահանդիպեցաւ. այլ զիջող ներողամտութեան. և որպէս զի փակուի և կանգ առնի անբարշտի յոխորդ արշաւանքը և յանդուգն յառաջընթացութիւնը՝ անհրաժեշտ է խելացի և հզօր զիմադրութիւն. «Եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայեան վասն չարին. իսկ եթէ բարի՝ ընդէր հարկանես զիս». «Յաղում անգամ բնակեցաւ անձն իմ ընդ այնոսիկ՝ ոչք ատէին զողջոյն»: «Ես էի խաղաղարար, յորժամ խօսէի՝ մարտընչէին ընդ իս»: Անհրաժեշտ է հզօր և ուժղին զիմադրութիւն մանաւանդ այն անբարիշտներին՝ որոնք բարոյական կեանքի դէմ են մղում իրենց արշաւանքը, որոնք կրօնական գաղափարների դէմ են պարզում իրանց բիւրագոյն՝ բայց անգոյն դրօշակը. «Զգոյշ լիւրուք՝ մի՛ ոք իցէ, որ զձեզ կողոպտիցէ ճարտարամտութեամբ և սնոտի խաբէութեամբ. որք ըստ մարդկան աւանդութեան՝ և ըստ տարեց աշ-

խարհիս. և ոչ ըստ Քրիստոսի». օրինակներ զիմադրողների—Յովսէփ՝ Պետափրէսի տանը, Մովսէսը՝ ոսկէ հորթի մօտ, Եղիան՝ Աքաբի առաջ. Յիսուսը՝ ամեն ժամանակ. Վարմիր Վարդանը՝ մոզախումբ բանակում. Ղևոնդ երէցը՝ Անգղ զիւղաքաղաքում. Զուշանն Վարդանայ՝ սոսկալի բանտում և այլն և այլն:

3) *Խաղաղարարութեան որդիները կամ պատու*—Խաղաղարարն Յիսուս խաղաղութիւն ձգելով երկնքի և երկրի, Աստուծոյ և մարդոյ մէջ՝ Որդի Աստուծոյ կոչեցաւ. և իրեն հետևող խաղաղարարներին ևս Աստուծուն որդիանալու երանին աւետեց. «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»: Խաղաղարարները արդարութիւն են վաստակում խաղաղութեան ճանապարհով. «Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ, որք առնեն զխաղաղութիւն»: Խաղաղարարների յիշատակը անջինջ է մնում, որովհետև սնբծութիւն պահեցին և ուղղութիւն տեսան յամենեօին և յամենայնի. «Պահեան գանբծութիւն և տես գուղղութիւն, զի գոն մնացուածքն առն խաղաղարարի»: Իսկ ամբարիշտները և խաղաղութեան հակառակորդները անյիշատակ են կորնչում և յանկարծակի. «Տեսի զամբարիշտն վերացեալ և բարձրացեալ իբրև զմայրս Լիբանանու: Անցի՛ և ահա ոչ էր. խնդրեցի՛ և ոչ գտաւ տեղի նորա». «Իսկ զիմարդ եղեն աւեր. յանկարծակի սատակեցան պակասեցան, կորեան վասն անօրէնութեան իւրեանց»:

ԺԲ. Տոմս.

ՀԵԼԱԾԵԼԿ

1) Հալածանքի նշանակութիւնը—Հալածանքը արքայութեան պտղի ծաղիկն է. իսկ երանութիւնը՝ արքայութեան պտուղն է. Հալածանքը այս աշխարհի մէջ իբրև ծաղիկ պիտի հաւաքենք, որպէս զի երկրնքումը պտուղը քաղել կարողանանք, որովհետև Աստուածպաշտական կենցաղավարութեան պայմանը՝ Հալածանքն է. «որք կամիցին Աստուածպաշտութեամբ կեալ 'ի Քրիստոս Յիսուս, 'ի Հալածանս կայցեն»։ 2) Հալածանքի պատկերը—Քարոյական և Նիւթական, և սոքա ունին իրենց ստորաբաժանմունքները—Անհատական և Հասարակական։ Անհատականն է՝ երբ մարդ՝ ինքը իրանից է Հալածուում—աշխարհայինը բարոյականից զերազատելով և մարմնաւորը՝ Հոգևորից, և անհոգ է բնաւին իւր զգայաբանքներն ու կրքերը սանձելու. այդպիսիները անաջողութեան են մատնուում և իրենք՝ զիրենք են կորուսանում. «Մարդոյ լեզուանույ մի՛ յաջողեսցի 'ի վերայ երկրի. զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն 'ի կորուստ», Հասարակականն է՝ երբ մարդ Հաւատարիմ գտով իւր կոչմանը՝ չէ թողնում որ կողոպտուի ու յափշտակուի իւր Հոգևոր գանձը, և ընդ միշտ Հոգևորն ու բարոյականը զերազատում է մարմնաւո-

րից ու աշխարհայինից. և այդ մշտապայծառ դրօշակի տակ ընթանալով՝ սիրով և յօժարութեամբ է տանում ամենայն հալածանք, 'ի սէր Աստուծոյ, Քրիստոսի. Հաւատացած լինելով—թէ Հալածանքը չէ կարող տապալել իւր Հոգևոր—բարոյական գաղափարը՝ որ է Սէր 'ի Քրիստոս և Քրիստոսի՝ Աստուած. «Արդ՝ ո՞վ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի նեղութիւն, թէ անձկութիւն, թէ հսկածանք, թէ սով, թէ մերկութիւն, թէ վիշտ, թէ սուր։ Քանզի Հաստատեալ եմ, եթէ ոչ մահ, և ոչ կեանք, և ոչ Հրեշտակք, և ոչ իշխանութիւնք, և ոչ զօրութիւնք, և ոչ որ կանս, և ոչ Հանդերձեալքն, և ոչ կարողութիւն։ Եւ ոչ բարձրութիւն, և ոչ խորութիւն, և ոչ այլ ինչ արարած՝ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյ անտի Աստուծոյ, որ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր»։ 3) Հալածանքի պայմանը—Հալածանքն ևս, որպէս և խաղաղարարութիւնը, 'ի կարևոր դէպս միայն պիտի զիջանի և խոնարհի Հալածողներին—երբ բարոյական և Հոգևոր կեանքը կազմալուծուելու վրտանդին չէ ենթարկուում. և երբ զոյնպիսի Հալածանքը կարող է օգտակար լինել Հալածողների Համարնոցա բարոյական կեանքի նկատմամբ. իսկ երբ բարոյական և Հոգևորը կեանքը պիտի կազմալուծուի և ճշմարտութեան մարգարիտները ոտնակոխ պիտի լինին. իսկ ինքնին ճշմարտութիւնը պիտի խորտակուի՝ յայնդէպս անխորհուրդ է Հալածակրութիւնը.

այլ անհրաժեշտ է ահեղ դիմադրութիւն իսլամի
 գաղափարի դէմ բարոյական զէնքերով—աղօթքով,
 պահքով, ողորմութեամբ, անձնաճանաչութեամբ, ար-
 դար և առաքինի կենցաղով. «Վասն այնորիկ առէք
 զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարողք լինիցիք
 ՚ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան: ...Ա-
 մենայն աղօթիւք և խնդրուածովք աղօթս առնել
 յամենայն ժամանակի հոգևով...»: «Տէր Աստուած իմ
 ՚ի Քեզ յուսացայ. փրկեա զիս յամենայն հալածչաց
 իմոց և ապրեցն զիս»:

ԺԳ. Տոմս.

ՆԱԽԱՏԵԱԼՔ—ՀԱԼԱԾԵԱԼՔ—ԲԱՄԲԱՍԵԱԼՔ:

1) Սաչալիք—Ռեան գիտութիւնը—Նախատուել, հա-
 լածուելը, բամբասուելը կազմում են մարդոյ կեանքի
 խաչակրութիւնը. այս խաչակրութիւնը երկու դի-
 տոմն ունի. առաջինը՝ որ նախատինքը, հալածանքը,
 բամբասանքը նոցա բաժինն է՝ որոնք ՚ի սէր Քրիս-
 տոսի արժանաւոր են հանդիսանում այդ խաչակիր
 երանութեանը. և ուրեմն յօժարութեամբ պիտի կրեն
 նախատանաց, հալածանաց և բամբասանաց խաչը,
 երկրորդ դիտումն այն է՝ որ այդ խաչակրութեան,
 այսինքն նախատողների, հալածողների, բամբասող-
 ների, շարժաւիթները—պատճառաբանութիւնները
 սուտ են և անհիմն, հակառակ են օրէնքին և խրղ-

ճին. թէև այդ նախատողները, հալածողները, բամ-
 բասողները, (օրէնքի) օրինական ձև տալ են կամե-
 նում իրենց չարութեան: Իսկ խաչակիր Երանութեան
 արժանաւորը, ՚ի սէր Քրիստոսի, ամենայն յօժարու-
 թեամբ է յանձն առնում անիրաւ նախատինքը, անօ-
 րէն հալածանքը, ստալօդ բամբասանքը, հաստատ
 համարուած լինելով՝ որ ինքը պիտի յաղթէ աշխարհին,
 որպէս և Երանի աւետող Քրիստոսը յաղթեց աշխար-
 հին և իւր բովանդակ կենաց պատկերը կտակ թո-
 դուց հաւատացեալներին. «Եթէ աշխարհ զձեզ ա-
 տեայ. զիտասջիք զի նախ զիս ատեաց: Եթէ յաշ-
 խարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրն սիրէր արդեօք.
 բայց զի չէք յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ
 յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ:
 ...եթէ զիս հալածեցին, ապա և զձեզ հալածես-
 ցեն...»: «...այլ քաջսլերեցարուք. զի ես յաղ-
 թեցի աշխարհի»: 2) Սաչալիք—Ռեան նշանակութիւնը—
 Նախատանաց, հալածանաց և բամբասանաց խաչակ-
 րութիւնը կազմում է մեր կեանքի պսակը. այդ պը-
 սակը վաստակելու համար յօժարութեամբ պիտի կը-
 րենք Յիսուսի հալածանաց և չարչարանաց խաչը.
 նախ՝ իբրև երախտապարտ հետևողներ մեր Երկնաւոր
 և Մեծ Սաչակիր Ուսուցչապետ Փրկիչ Յիսուսին և
 երկրորդ՝ մեր ճշմարիտ խաչակրութիւնը կսանձահա-
 րէ մեր աշխարհային բուռն կիրքերը և կղաղարիմք
 ՚ի մեղաց. «Քրիստոսի չարչարիլն մարմնով՝ վասն

մեր. և դուք 'ի նոյն միտս վառեցարուք. զի որ չարչարի մարմնով՝ դադարի 'ի մեղաց»: 3) Նստահարութեան օգտակարութիւնը — Մեր ճշմարիտ խաչակրութիւնը երկու օգուտ ունի. առաջինը՝ որ տեսնողներին ուսուցիչ է և դաստիարակ. իսկ լսողներին՝ բարի օրինակ. երկրորդը՝ որ ունինք վարձք երկնքում ըստ անսուտ բանին Քրիստոսի. որով և կնքում է իւր Յրանին. «Յնձացէք և ուրան լերուք. զի վարձք ձեր բազումք են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն, որք յառաջ քան զձեզ էին»,

ԺԴ. Տոմս.

Մ Ե Ղ Ք

- 1.) Մտահարութեան օգտակարութիւնը ա. Մեղքը աշխարհ մտաւ Ադամով. «...ի միօջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին...»:
- բ. Մարդ մեղքով է յղացում ու ծնւում. «Անօրէնութեամբ յղացաւ և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ»:
- գ. Մեղքը սրտիցն է գալի. «Ջի 'ի սրտէ ելանեն խորհուրդք չարք. ըսպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք»:
- դ. Մեղքի թելադրողը սատանան է.

«...որ առնէ զմեղս, 'ի սատանայէ է. զի իսկզբանէ սատանայ մեղանչէ. վասն այնորիկ յայտնեցաւ Որդին Աստուծոյ՝ զի լուծցէ զգործս սատանայի»:

- 2.) Նշահարութեան օգտակարութիւնը ա. Բարին գիտենալ և չանել՝ նշանակում է մեղք գործել, «Որ ոք գիտիցէ զբարին, և ոչ առնիցէ՝ մեղք են նմա»:
- բ. Այն ամենը, ինչ որ հաւատով չէ կատարում՝ մեղք է. «...ամենայն ինչ, որ ոչ 'ի հաւատոց է՝ մեղք են»:
- 3.) Վստահարութեան օգտակարութիւնը ա. Մեղքը արգելք է լինում մեր ազօթքների ունկնդրութեանը Աստուծոյ կողմից. «Ձմեղս թէ տեսանէի 'ի սրտի իմում. ոչ լսէր ինձ Տէր»:
- բ. Մեղքը պատճառ է դառնում նուազման, ոչնչացման. որպէս իւրաքանչիւր մի անհատի՝ նոյնպէս հասարակութեան կամ ազգերի «Նուազեցուցանեն զազոս մեղք»:
- գ. «Իսկ զիմորդ եղեն աւեր՝ յանկարծակի սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան իւրեանց»:
- դ. Մեղքը յառաջ է բերում մեղանչողի մէջ ամօթ, անհանգստութիւն, տրտ-

մութիւն և ցաւ. «իսկ արդ՛ զինչ պտուղ ունէիք յայնժամ. որովք այժմդ զամօթի հարեալ էք»: «Ո՛ւր է խաղաղութիւն ոսկերաց իմոց. յերեսաց մեղաց իմոց»: «...գօրհանապագ տրտում գնայի, զի անձն իմ լի եղև չարչարանօք. և ոչ գոյ բըժըշկութիւն մարմնոյ իմոյ»:

դ. Մեղքը զրկում է մեղանչողին երկրնքի արքայութիւնը ժառանգելու իրաւունքից. «...ամենայն պոռնիկ, կամ պիղծ, կամ ագահ, որ է կռապարիշտ՝ ոչ ունի գժառանգութիւն յարքայութեանն Քրիստոսի և Աստուծոյ»: «...որք զայսպիսի ինչ գործեն՝ զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն»:

4.) Մեղքի գեղը ա. Աստուծոյ խօսքն ու պատուիրանը ազատում է մարդուն մեղքից. «Ի սրտի իմում թաքուցի զբանս քօզի մի մեղաց»:

բ. Ողորմութիւնն ու Աստուծոյ երկիւզը փշրում է մեղքի կապանքները և խոտորում է մարդուն չար ճանապարհից. «Ողորմութեամբ և ճշմարտութեամբ թողանի մեղք և երկիւ-

ղիւ Տեառն խոտորի ՚ի չարէ»: «...որովք մարդ. ինքնաքննութիւնն ու անձի դադատանը խոտորում է մարդուն մեղքի ճանապարհից. որովհետև նա քննելով իրան՝ դատում է իրան և իւր գատատանի վճիռը կայացնում է այսպէս՝ թէ իւր գործած մեղքը անհամեմատ աւելի ծանր է քան թէ, ըստ ծանրութեան մեղացն, Աստուծոյ պատիժը, «Ապա մեղադիր լիցի մարդ. ինքն լինքն ասիցէ. թէ գորպիսիս վճարէի, և ոչ արժանի՛ր» որոց մեղացն՝ պատժեաց զիս»:

գ. Աշմալա խոտտովանութիւնը փշրում է մեղքի շղթայն, որովհետև յառաջ է բերում ապաշխարութեան զղջումն. որով և մեղանչողը իւր ճշմարիտ խոտտովանութեան շնորհիւ սիրելի է լինում Աստուծուն. «Որ ծածկէ զամբարշտութիւնս իւր՝ ոչ յաջողեացի. իսկ որ պատմէ յանդիմանէ՝ սիրելի հղեցի»:

5.) Մեղքի գեղը. Սկզբնական և ներգործական. ա. Մեղքը Այսպիսով մտաւ աշխարք և ժառանգական տևողութեամբ հատու մենչև ՚ի Քրիստոս.

որով և կորցրեց իւր ժառանգական գոյութիւնը և տեւողական ազդեցութիւնը. «Ապա ուրեմն որպէս միոյն յանցանօք յամենայն մարդիկ պատապարտութիւն, նոյնպէս և միոյն արդարութեամբ՝ յամենայն մարդիկ արդարութիւն կենաց»։ Բ. Ներգործական մեղքը ընթացակից է մարդուն. մարդը ազատ չէ մեղքից, որովհետև ամեն անգամ, երբ թուլանում է մարդուս պարտաճանաչութիւնն ու պարտակատարութիւնը՝ իսկոյն յառաջ է գալիս մեղքը ընթացակից լինելու նոյն պարտագանցին. «Եթէ ասիցեմք, եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք՝ զանձինս խաբեմք. և ճշմարտութիւն ՚ի մեզ ոչ գոյ»։

6.) Ներգործական Մահացու կամ Մահուչափ և ներելի կամ թեթեւ. ա. մահացու կամ մահուչափ մեղքը՝ զիտակցաբար և յօժարաբար գործուած պարտագանցութիւնն է, հակառակ օրինաց և ազդարարութեան խղճի մտաց։ Մահացու մեղանչողք ծառայք են մեղաց. «...ամենայն՝ որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց». նոյնպիսի մեղան-

չողք օր ըստ օրէ հաստատուում են մեղքի մէջ, փոխանակ խուսափելու «Զօրացուցին յանձինս իւրեանց ըզբանս չարութեան. խորհեցան թաքուցանել ինձ զորոգայթ. և ասացին ոչ տեսանէ զայս Տէր». նոյնպիսի մեղանչողք արհամարհում են մեղքի պատժական հատուցումը. «Զայս ամենայն արարեր՝ և լռեցի քեզ. կարծեցեր անօրէնդ ՚ի մտի քում. թէ և ես քեզ նմանիցիմ». յուսահատուելով Աստուծոյ այցելութեան յամեցումից՝ շարունակում են յամառիլ իրանց մեղքերի մէջ. «Եւ ասեն, քաջացունք՝ զհետ ապստամբութեանց մերոց գնասցուք. և իւրաքանչիւր զհաճոյս սրտի իւրեանց չարի՝ արասցուք». նոյնպիսի մեղանչողք իրենց գործած յանցանքի պատճառը ձգում են Աստուծոյ կամ ուրիշների վերայ. «...կինս գործտուր ընդ իս՝ սա ետ ինձ ՚ի ծառայանտի և կերի... և ասէ կինն. օձն խաբեաց զիս և կերի». նոյնպիսի մեղանչողք ուրիշներին ևս գայթակղեցնելով՝ աշխատում են մեղքի մէջ

ձգել. «...և եա առն իւրում ընդ իւր, և կերին». «Եւ որ ոք գայ- թակղեցուցէ զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ յիս հաւատացելոց՝ լաւ է նմա եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա՝ և ընկղմիցի ՚ի խորս ծովու». նոյնպիսի մեզանչողք հա- ւատոյ խորհուրդը մեկնում են քմա- հաճութեամբ և կամաւ կուրանում են հաւատոյ գիտութեան առաջ. «Քոյշ լերուք՝ մի ոք իցէ՝ որ զձեզ կողոպտիցէ ճարտարամտութեամբ՝ և սնտոի խարէութեամբ. որք ըստ մարդկան աւանդութեան՝ և ըստ տարբերց աշխարհիս՝ և ոչ ըստ Քրիս- տոսի»:

բ. Թէ՛նէ հա՛ն էրէ՛ն յէջը՝ անգիտակ- ցաբար, ակամայ կամ բռնադատ- ուած, պատահաբար և տարակուսա- բար գործուած պարտագանցութիւնն է: Մահացու մեղքը զրկում է մե- ղանչողին Աստուծոյ հաղորդակցու- թիւնից և մահացնում է հոգին. «Մեղք ձեր որոշեն ՚ի մէջ ձեր և ՚ի մէջ Աստուծոյ» «...են մեղք՝ որք մահու չափք են»:

7.) Մահացո՛ւ մե- չպարտութիւն, Նախանձ, Բարկու- ղոյ պեսակները թիւն, Ծուլութիւն, Ագահութիւն, Որկրամոլութիւն, Բղջախոհութիւն: ա. Հարստութիւնն ունեցողին հակառակ է Աստուած. «Տէր ամբարտաւանից հակառակ կայ»:

բ. Նախանչը ուր որ կայ՝ այնտեղ տի- ըրում է անկարգութիւն և ամենայն չարութիւն, «Ձի ուր հեռ և նա- խանձ, անդ է՝ անկարգութիւն և ամենայն իրք չարք»:

գ. Բարկո՛ւնը զրկում է մարդուն ՚ի վրէժիւնորութիւն. «մի զանձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան»:

դ. Ծո՛ւլութիւնը տանում է մարդուն դէպի կարօտ վիճակ կամ աղքատութիւն, «...մինչև երբ անկեալ գնիս ո՛վ վատ. երբ ՚ի քնոյ զար- թիցես. սակաւիկ ինչ ննջիցես. սա- կաւիկ ինչ դադարեցես. և փոքր ինչ ընդգրկիցես զձեռն քո ՚ի վերայ լանջաց քոց. և եթէ զայս արասցես՝ եկեսցէ իբրև կարապետ աղքատու- թիւն քո, և կարօտութիւն քո իբրև չարագոտն սուրհանդակ»:

ե. Ափսոսանքն արմատ է ամենայն չարեաց. և առիթ է տալիս շեղուելու հաւատոյ ճանապարհից. «Զի արմատ ամենայն չարեաց՝ արծաթասիբուլթիւն է որում ոմանց ցանկացեալ՝ վրիպեցան ՚ի հաւատոցն...»:

զ. Արքայութիւնն տանում է մարդուն գէպի արբեցուլթիւնը, անառակութիւն և աղքատութիւն. որկրամուկների Աստուածը՝ իրանց որովայնն է, որին և նուիրուած են իբրև երկրաւոր ցանկալիք և որը իրանց կորուստն է. «Քանզի ամենայն արբեցող և բողարած՝ աղքատացի»:
«Որոց կատարածն կորուստ է, որոց Աստուած՝ որովայնն է... որք զերկրաւորս և եթ խորհին»:

է. Բողոքանքն տանում է մարդուն գէպի յուսահատութիւն վերին կենաց. «Որք զանձանց իւրեանց զյոյսն հատին և մատնեցին զանձինս գիճութեան»:

Տ.) Մահացո ա. Խոնարհութիւն. (Հպարտութեան փոխարէն արարեալստեան) խոնարհներին Աստուած Բեան յիշատակէր բարձրացնում է. «խոնարհեցարուք առաջի Տեառն և բարձրացուցէ զՁեզ»:

բ. Սէր. (նախանձի փոխանակ) Ուր կայ սէր՝ այնտեղ նախանձը չէ կարող աղղել. սէրն է ամենայն առաքլինի գործքերի կատարման յօդակապը: «Սէր ոչ նախանձի». «Զգեցարուք... գտէրն. որ է զօր կատարման»:

գ. Հեղութիւն. (բարկութեան փոխանակ) Հեղութիւնը առիթ է տալի հանցարարութեան կրակը երկայնամիտ ներդամութեամբ. «Զգեցարուք... զհեղութիւն, զերկայնամրտութիւն... ներել միմեանց. շնորհել իրերաց»:

զ. Աշխատանքութիւն. (ծուլութեան փոխարէն) աշխատասիրութիւնը մարդուն աղքատութիւնից կէտկէ. ամենայն աշխատասէր պարտաճանաչ է և պարտակատար. ՚ի հարկէ բարի, ազնիւ և արդար վաստակի աշխատասէրը. «երթ առ մըջիւնն սվ վատ. և նախանձեաց ընդ ճանապարհս նորա... և պատրաստէ յամբարայնոց զկերակուր. և բազում համբարս գնէ ՚ի հունձս...»

ե. Ապարհանքութիւն. (Ազատութեան փոխանակ) Ազատութեան և առհասարակ

րակ տրոց մէջ մարդ պէտք է առատաձեւն լինի. մինչև իսկ հատուցում չստանալու ակրնկալութեամբ. մանաւանդ եթէ ինքն էլ առատաբար է պարզեատրուած Աստուծոց. «Ամենայնի որ խնդրէ 'ի քէն' տուր, և զոր ինչ հանէ ոք 'ի քէն, մի պահանջիր»: «Յրնչից քոց առնիցես զողորմութիւն. և մի ազահիցէ ակնքո՛ յորժամ առնիցես զու զողորմութիւնսն»:

գ. **Բարեխառնութիւն** (որկրամուլութեան փոխանակ,) բարեխառնութիւնը երկու կերպ օգուտ է տալիս մարդուն — նախ՝ հոգեպէս կամ բարոյապէս և երկրորդ՝ նիւթապէս և Ֆիզիքապէս. բարոյապէս՝ որ պահեցողութեան վարժելով իրան՝ պահել կարող է իրան և պէս պէս չար ցանկութիւններէց. նիւթապէս՝ որ շատ ծախսերից գերծ կլինի Ֆիզիքապէս՝ որ ստամոքսը չի ծանրացնի շատակ երութեան վտանգով և ուրեմն անձի առողջութիւն կունենայ, հոգեպէս՝ որ իւր հոգսերի առարկան չի շինի միայն որովայնը, այլ Աստուծո՞ւ և

Նորա Նախահնամութիւնը. «մի այսուհետև հողացէք, և ասիցէք զինչ կիրիցուք կամ զինչ արբցուք... քանզի զիտէ հայրն ձեր երկնաւոր թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն»:

Ողջախոհութիւնը (բղջախոհութեան փոխանակ,) Ողջախոհութիւնը առողջ է պահում ո՛չ միայն հոգին՝ այլ և մարմինը. այդ պատճառով էլ կան մարդիկ՝ որոնք կամովին սպանում են իրենց մէջ ցանկական կիրքերը և լինում են ներքինիք իրենց մէջ. «...են ներքինիք՝ որք զանձինս իւրեանց արարին՝ ներքինիս վասն արքայութեան երկնից»:

ԺՆ Տոմս.

ԵԿԵՂԵՅԻ ԱՍՏՈՒԾՈՅ

- 1.) **Նշահաւորութիւն** — Ժողով ճշմարիտ հաւատացելոց 'ի Քրիստոս. «Եւ եղև երկիւղ մեծ 'ի վերայ ամենայն եկեղեցւոյն...» գործք՝ Ե. 11:
- 2.) **Սնդհաւորութիւն** — Եկեղեցին սկսուեցաւ զրախտի մէջ թիւն և միութիւն երբ ստեղծուեցան նախաձեռողք և

Յէկէցոյ և Կրօնի իսկոյն յառաջ եկաւ կրօնը— պատուի-
րանապահութեամբ. «Եւ արար Աս-
տուած զմարդն ՚ի պատկեր իւր...
արու և էղ արար զնոսա... և
ասէ. յամենայն ծառոց որք են ՚ի
գրախտիդ՝ ուտելով կերիցես: Բայց ՚ի
ծառոյն գիտութեան բարւոյ և չարի
մի ուտիցէք...»: Ծննդ. ա. 27. բ.
16. 17.: Կրօնը իւրաքանչիւրին
առանձին առանձին կապում է Աս-
տուծոյ Հետ. իսկ Եկեղեցին Կրօնի
շաղկապով բոլորին միասին կապում
է Աստուծոյ Հետ:

3.) Բռժանման Եկեղեցի Հին Ուխտի— նախնի կամ
նախնական, նահապետական կամ
Իսրայէլեան, Մովսիսական կամ ըն-
դօրինական և եկեղեցի Նոր Ուխտի
Քրիստոնէական:

4.) Հիմնարկի Քր- Քրիստոնէական եկեղեցին Հիմնեց
բիստանէան Յէկ- Յիսուս Քրիստոս և ինքն է նոյն
եկեղեցւոյ Հաւատոյ Հիմքը, «Զի
զհիմն այլ ոք ոչ կարէ զնել քան
զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս»:
Ա. Կորնթ. գ. 11:

5.) Գլուխ և փո- Քրիստոնէական եկեղեցւոյ գլուխն է
խանութի Քրիստոս ինքն Յիսուս Քրիստոս և փոխանորդք

Պետրոս Եկեղեցոյ են Առաքելք և յաջորդք նոցին.
«Ես ընդ ձեզ եմ զամենայն առուրս
մինչև ՚ի կատարած աշխարհիս»:
Մատթ. իր. 20: «Զգոյշ կացէք ան-
ձանց և ամենայն Հօտիդ, յորում
եզ զձեզ Հոգին սուրբ տեսուչս Հով-
ուել զժողովուրդ Տեառն»: Գործք.
Ի. 28.

6.) Հոգի-Նիւն Միութիւն, Սրբութիւն, Կաթողի-
կանական Քրիստո- կեութիւն կամ ընդհանրականու-
նէան Յէկէցոյ թիւն և Առաքելականութիւն. «...և
եղիցին մի Հօտ և մի Հովիւ»: Յովհ.
Ժ. 15: «Սուրբ արա զնոսա ճշմար-
տութեամբ. զի քո բանդ ճշմարտու-
թիւն է»: Յովհ. Ժէ. 17: «Գնացէք
այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն
Հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն
Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:
Մատթ. իր. 19: «Ղինեալք ՚ի վերայ
Հիման առաքելոց և մարգարէից.
որոյ է գլուխ անկեանն Քրիստոս
Յիսուս»: Եփես. Բ. 20:

7.) Տեանի Քրիս- Ձինւորեալ և յաղթանակող. «Զի
անէան Յէկ- եթէ մարմնով զնամք, այլ ոչ եթէ
եկեղեցւոյ ըստ մարմնոյ զինւորիմք, զի զեն-
գինուորութեան մերոյ ոչ է մարմնա-

... ար, այլ զօրաւոր յԱստուծոյ առ ՚ի
 փակելոյ զամուրս»: Բ. Կորնթ. Ժ.
 3-4: «Զբարւօք պատերազմ պատե-
 րազմեցայ, զընթացոն կատարեցի.
 զհաւատոսն պահեցի: Այտուհետև կայ
 և մնայ ինձ արդարութեան պսա-
 կըն...» Բ. Տիմ. Գ. 7. 8:

8.) Բաժանման Եկե- Կարգ քահանայական կամ ուսուցա-
 ղէցոյ նոյն եկեղեցի. «Զգոյշ կացէք անձանց
 և ամենայն հօտիկ, յորում եղ զձեզ
 Հոգին Սուրբ տեսուչս հովուել զժո-
 դովուրդ Տեառն»: Գործք. Ի. 28:
 «Եւ դու քարոզեա զբանն. հաս ՚ի
 վերայ ժամու և ՚ի տարաժամու»: Բ. Տիմ. Գ. 2:
 «Այոպէս համարես-
 ցին զմեզ մարդիկ իբրև պաշտօնեայ
 Քրիստոսի և հազարապետս իորհրդ-
 ղոյն Աստուծոյ»: Ա. Կորնթ. Գ. 1:
 «Զհետ երթայք սիրոյ, և նախան-
 ձաւորք լերուք հոգևորացն... Եւ
 ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ
 և ըստ կարգի լինիցի: Ա. Կորնթ.
 ԺԳ. 1. 40:

9.) Կոչումն Եկե- Կոչումն Հին Ուխտի եկեղեցւոյ —
 ղէցոյ պատրաստութիւն յակնկալութեան
 Մեսիայի, Կոչումն Նոր Ուխտի եկե-

ղեցւոյ — պատրաստութիւն յակնկա-
 լութեան երկրորդ զալսաեան Քրիս-
 տոսի և հանդերձեալ կենաց, «Քան-
 զի զատուէր հանդերձելոց բարեացն
 ունէին օրէնքն, և ոչ զնոյն կերպա-
 րան իրացն...» Եբր. Ժ. 1: «Ամե-
 նեցուն մեզ յանդիման լինի կայ
 առաջի Քրիստոսի», Բ. Կորնթ. Բ.
 10: «Զի ընկալցի իւրաքանչիւր իւ-
 րով մարմնովս զոր ինչ գործեաց
 յառաջ, եթէ բարի և եթէ չար»: Բ.
 Կորնթ. Ե. 10:

10.) Սահման- Տէրութեան Ժողով Նիկիոյ. 325 թ. 318
 րբբբ-Բիւն Եկե- Հայրապետք. Հերքուեցաւ Արիոսի
 ղէցոյ աղանդը — որ ուրանում էր Քրիստոս-
 սի Աստուածութիւնը, դաւանեցաւ —
 Քրիստոսի Աստուածութիւնը և Հա-
 ւատոյ հանգանակի սահմանուեցաւ
 Մեծին Կոստանդիանոսի օրօք: Տէր-
 ղէրտիւն Ժողով Կոստանդնուպոլսոյ. 381
 թ. 150 Հայրապետք. Հերքուեցաւ
 Մակեդոնի աղանդը — որ ուրանում էր
 Հոգւոյն Սրբոյ Աստուածութիւնը. դա-
 ւանեցաւ — Հոգւոյն Սրբոյ Աստուածու-
 թիւնը. համապատիւ և համազոյ
 Հօր և Որդւոյ. Մեծին Թէոդոսի օրօք:

Տիեզերական ժողով Եփեսոսի. 431 թ.
 200 Հայրապետք. Հերքուեցաւ Նեստորի աղանդը — որ դաւանում էր 'ի Քրիստոս երկու բնութիւն և երկու անձնաւորութիւն, տ. այլ դաւանէր Քրիստոս յաւիտեանական որդի Հօր և այլ՝ Քրիստոս որդի Մարիամու. և սուրբ Աստուածածինը դաւանում էր Քրիստոսածին կամ մարդածին և ոչ Աստուածածին. դաւանեցաւ — 'ի Քրիստոս անշփոթ և անբաժանելի իրական միաւորութիւն երկու բնութիւններից, ուրեմն մի անձն, մի դէմ և մի բնութիւն. իսկ սուրբ Աստուածածինը՝ դաւանեցաւ Աստուածածին. փոքր Թէոփոսի օրօք:

Ժ. 2. Տումն.

ԽՈՐՀՈՒՐԴԻ ՖԵԿԵՂԵՑԻՈՅ

1.) Նշանադրութիւն խորհուրդք եկեղեցւոյ են Աստուածային շնորհաց գաղտնիքը՝ որ մեր մարմնական աչքի զգայական տեսութեանը չէ ենթարկուում. այլ հաւատոյ աչքով պիտի տեսնենք Աստուա-

ծային շնորհաց գաղտնի պարզեւտօրութիւնը կամ բաշխումը. «Աչ ինչ անվայելուչ և անսրբազան է ունել խորհրդոց եկեղեցւոյ զգալի պատկերս. այլ Աստուածարժան տեսութեան է օրինակօ կերպացոյցանել բնաւորականօք և մարդավայելուչ պատկերօք: Դիտնիսիոս. զիրք. եկ. քահ»:

2.) Սահմանադրութիւն մանագրուած են Աստուծուց և Քրիստոսից Ամենա-Նիւնը՝ Աստուածադիր 'ի դրախտին և Սրբագործեալ՝ Քրիստոսի 'ի Կանա Գալիլիացւոց. Միշտութիւնը՝ Քրիստոսի 'ի Յորդանան 'ի Յովհաննէս. Իրոշքը՝ Քրիստոսի 'ի Յորդանան Հողուցն Սրբոյ իջմամբ. Աղաշխարհութիւնը՝ Քրիստոսի 'ի քարոզութեան «Ազախարեցէք և հաւատացէք Աւետարանս» Հաղորդութիւնը՝ Քրիստոսի 'ի յավերժատանն. Արքա կամ չեանարդարութիւնը՝ Քրիստոսի յետ Յարութեան. «գնացէք այսուհետև: աշակերտեցէք...» և առէք Հօգին սուրբ եթէ ումէք թողցօք զմեղս...» Աւերջին Օծումն կամ այնչաւութիւն Հիանարաց՝ Քր-

ընտոսիւ ՚ի բժշկութեանն պէս պէս
հիւանդաց և հիւանդութեանց բանի
խորհրդով, ձեռնադրութեամբ և քը-
ղանցիւ հանդերձին:

3.) **Նոյստի** Եկեղեցւոյ սրբարար խորհուրդք ան-
հրաժեշտ են իւրաքանչիւր հաւա-
տացելոյ համար. որովհետև խորհրդ-
քոց նպատակն է բարեկարգութիւն
եկեղեցւոյ. իսկ եկեղեցւոյ բարեկար-
գութիւնը անտալթաք ուղիով առաջ-
նորդում է հաւատացեալներին զէպի
փրկութիւն: (օրինակները կարելի է
վերցնել իւրաքանչիւր խորհրդից):

4.) **Մարտիրոս** Եկեղեցւոյ սրբարար խորհրդոց մա-
տակարարք են՝ կարգաւորները «զը-
նացէք այսուհետև աշակերտեցէք
զամենայն հեթանոս, մկրտեցէք ըզ-
նոսա...»:

5.) **Իսկոն ճատան** Նիւթ և ձև. նիւթն է այն զգալի
իրը՝ որ գործ է ածուծ խորհրդոյ
կատարման ժամանակ. ձևն է այն
Աստուածային խօսքը՝ որ ասում է
խորհրդոյ կատարման ժամանակ-

6.) **Ենթակայ** Ամենայն հաւատացեալ:

7.) **Կրէնէի** Ապաշխարութիւն, Հաղորդութիւն,
Ամուսնութիւն, Վերջին Օծումը:

8.) **Անկէնէի**. Մկրտութիւն, Գրոշմ, Կարգ կամ
Ձեռնադրութիւն:

9.) **Պարագայ** ա. փրկագործականք — Մկրտութիւն և
Խորհրդոց. Հաղորդութիւն:

բ. Սպառազինականք — Գրոշմ, Ապաշ-
խարութիւն և վերջին օծումն:

գ. Ազատ — յօժարականք — Ամուսնութիւն
կամ պսակ:

դ. Արժանաւոր — քնտրականք — Կարգ կամ
Ձեռնադրութիւն:

ժԷ. *Sudu.*

Մ Կ Բ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

1.) **Նշանակութիւն**. Մկրտութեան նշանակութիւնն է—
վերստին ծնանելով աւագանից՝ ազա-
տուել սկզբնական մեղքից և որդի-
անալ Աստուծոյ, «Աւագանն զմեզ ծը-
նանի վերստին՝ որդիանալ Աստուծոյ,
ազատելով ՚ի մեղաց, և կենսագործելով
յանմահական կեանս»: Խոսք. Ժա-
մազիրք.

2.) **Նոյստի**. Ազատութիւն սկզբնական մեղքից,
որդէգրութիւն Հօրն երկնաւորի. Ժա-
ռանգութիւն Երկնից արքայութեան.

«Եթէ ոք ոչ ծնցի 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ»: Յովհ. Գ. 5:

3.) Խորհրդ-երէն ընչիման և անչիման-լեւան.

Գաւանութիւն Ամենասուրբ Երրորդութիւնն. լերեքօրեայ թաղումն. 'ի Յարութիւնն Քրիստոսի «Զոր օրինակ մահուն Քրիստոսի լինքն նկարագրէ մկրտութիւն աւագանին. երիցս ընկըղմելն 'ի ջուրն գերեքօրեայ թաղումն Յիսուսի նշանակէ. իսկ իջանել յաւագանն և ելանել՝ գյարութիւն Տեառն գուշակէ»: Ս. Ղնորհ: «Մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»: Մատթ. ԻԸ. 19.

4.) Կի-լ և Զի.

Բնական ջուր. «...միթէ զջուր ոք արգելուլ կարէ առ 'ի չմկրտել զնոսա»: Գործք. Ժ. 47: «Եթէ ոք ոչ ծնցի 'ի ջրոյ...»: Յովհ. Գ. 5: «Մկրտի երեխայս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ...»: «Մկրտեցէք զնոսա...» Մատթ. ԻԸ. 19:

5.) Միշրո-լեւան նորածին երեխայոց և պաշտօնիս հար.

Մկրտութեան խորհուրդը նորածինների համար միւսնոյն ներգործութիւնն ունի երաշխաւորութեամբ ծնողաց և կնքահօր՝ որ ինչ չափա-

հասների համար, որ իրանք տալիս են իրանց գաւանութիւնը: Քրիստոս ինքը իրաւունքից չզրկեց մանուկներին մասնակից լինելու Աստուածային օրհնութեանը. «Թոյլ տուք մանկուոյդ՝ և մի՛ արգելուք զգոսա գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից»: Մատթ. ԹԺ. 14:

6. Տարբերո-ա. Հին ուխտի մկրտութիւնն էր՝ ծիւղի-ն հին ուխտի սական լուացմունք. ստուերանկար Յովհաննոս և Քրիստոսի ստուերանկար:

բ. Յովհաննու Մկրտութիւնն էր՝ անհատական և անհատական փրկական:

գ. Քրիստոնէական մկրտութիւնն է փրկական կամ Ղնորհական:

ԺԸ. Տոմն.

Գ Ր Ո Չ Մ

1.) Նշանակում-լեւան. Գրողը — օծութիւն կամ Կնիք Սուրբ Հոգւոյն. Գրօշմուել — օծուել կամ կրնքուել սուրբ Հոգւով՝ հաւատը մահու չափ խոստովանուելու համար. «Յօծութիւն ունիք առ 'ի սրբոյն... օծու-

Թիւնն զոր ընկալարուք ՚ի սմանէ, բնակեացի ՚ի ձեզ»: Ա. Յովհ. Բ. 20. 21: Մարմնոյ որոշեալ զգայարանքները — ճակատ, աչքեր, ունդունք, բերան, ականջներ, սիրտ, քամակ, ձեռքերի մէջը, ոտքերի տակը. իբրև սպառազինութիւն. որովհետև Մկրտութեան խորհուրդը Զինուորութիւն է նկատուամ. իսկ Իրոշմի խորհուրդը Սպառազինութիւն. և ուրեմն դրոշմելով որոշեալ զգայարանքները՝ Մըկըրտողը կամ զինուորը Իրոշմով կամ սպառազինութեամբ է զինուում մեզաց պատերազմի մէջ նոյն մեզաց իշխանութեան ղէմ. «...և լայսմ օծութենէ զօրանամք գիտել զամենայն»: Լամբը. ՚ի ճառն Հոգւոյն Սրբոյ: «Սոյնպէս ՚ի յօծումն իւզոյն պարարեալ յուսով, զՀոգւոյն զօրութիւն սովիմբ և ՚ի սոյն Համարիմք ունել ամենայնիւ աներկմտելի»: Նարեկ. ՂԳ:

2.) Իրոշմէն ետ-
զէրը և խոր-
հուրդը:

3.) Անիբնէնի և Անկրկնելի և անբաժանելի — որով-
անբաժանելի մէջը-
հետև շարունակութիւն է մկրտու-
թեան ըստ արարողական ձևոյն և
լատ խորհրդական շնորհաց:

Նիւթն է — սուրբ Միւռոնը. Ձևն է — «Իւզ անոյշ յանուն Յիսուսի Քրիստոսի Հեղեալ ՚ի վերայ քո՝ կնիք երկնային պարզեացն անապականութեան»:

4.) Առաջաւելնէն Առաքեալք ձեռնադրութեամբ և
դէս էին Հասարակ-
աղօթիւք կատարում էին այս խոր-
հուրդը և սուրբ Հոգին ստանում էին
մկրտեալք. «Յայնժամ եզին զձեռս
՚ի վերայ նոցա՝ և առնուին զՀոգին
սուրբ»: Գործք. Ը. 17: Իսկ երբ
Հաւատացելոց թիւը սկսաւ աճիլ՝
ձեռնադրութիւնը փոխեցաւ սուրբ
իւզոյ գործածութեանը «...՚ի յօծումն
իւզոյն պարարեալ յուսով, զՀոգւոյն
զօրութիւն սովիմբ և ՚ի սոյն Համարիմք
ունել...»: Նարեկ. ՂԳ:

ԺԹ. Տոմս.

ԱՊԱՀԽԱՐՈՒԹԻՒՆ

1.) Նշանակումն. Ապաշխարել. ճշմարիտ զգջմամբ ար-
դարանալ մեղքից ապաշխարու-
թեամբ առ Աստուած և առ մարդ.
առ Աստուած «...զգջացան ի սիրտ»

իւրեանց և ասեն, զինչ գործեսցուք. ասէ ցնոսա Պետրոս. ապաշաւեցէք»: Գործք. Բ. 37. 38: Աւմարդ՝ պատճառած վնասուց հատուց հատուցմամբ. «...զկէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ գոք զրկեցի՝ հատուցից չորեքկին»: Ղուկ. ԹԹ. 8. 9:

2.) Աշխարհա սպառնալիս և անաչել մեղաց գորութիւնը. խորհրդաւոր և նշանաւոր. 3 իշել Աստուծոյ սէրը. Գ. Յօժար սրտով չարչարել մարմնաւոր կրքերը. Գ. աչքի առաջ ունենալով իւր վատ անցեալը, և. Ամենօրեայ քննութեան ենթարկել սիրտը:

3.) Աստուծոյ անուանումը և իրաւութիւն և վիշտ կարօտում են լեւան հարեարոն — անկեղծ արտայայտութեան առաջի լեւանը և նախնի մտերմի. քահանայն՝ Աստուծոց կարհրապարտանքն — գաճ մտերիմն է ժողովրդի համար. պաշտարանը և նշանը — գաճ ուրեմն խոստովանութիւնը պէտք է չեւ մեր մէջ. լինի և անկեղծ պէտքէ լինի նոյն քահանայի առաջ. որից յետոյ և կըլինի թողութիւն մեղաց. «Բազումք ՚ի հաւատացելոցն գալին և խոստովան լինէին, և պատմէին զգործս իւրեանց»: Գործք. ԹԹ. 18: «Ասա զանօրէնութիւնս քո, զի արդարացիս»: «...եթէ խոստովան լինիմք

զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար՝ առ ՚ի թողուլ զմեղս մեր»: Ա. Յովհ. Ա. 8. 9: Մովսիսի սահմանադրած հրապարակական ապաշխարութեան և խոստովանութեան հետքը կայ այսօր և մեր մէջ. երեւում է այդ ՚ի ժամ սուրբ պատարագի:

4.) Բանասիրանք և արքելական ժամանակների սահմանադրութեամբ ծանր մեղուցեալք բանագրում էին. և սահմանեալ ապաշխարութիւնը կատարելուց յետոյ՝ արձակումն էին ստանում. «Մատնել զայնպիսին սատանայի ՚ի սատակումն մարմնոյ. զի ոգին ապրեցի...» Ա. Կորնթ. Ե. 5: «Եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի...»: Յովհ. Ի. 23: «Ողորմեցիքեզ մարդասէրն Աստուած...»: Փամագիրք:

5.) Պարագայ. Նիւթը — Մեղքը. Չէր — Արձակումը. Ենթակայն — Ապաշխարողը. պաշտօնեայն — Կարգաւորը:

Լ. Տումն.

ՀԱՂՈՐԳՈՒԹԻՒՆ

1.) Նշանակու-նի-ն-ձաշակմամբ և սրբմամբ Սրբագործեալ Հացի և Գինույ՝ է ճաշակումն Մարմնոյ և Սրբումն Արեան Փրկչին և սորանով է յաւիտենական կեանք և բնակութիւն իրար մէջ Յիսուս՝ և Նորան Հաղորդակիցը «Առէք կերէք այս է մարմին իմ. արբէք ՚ի սմանէ, այս է արիւն իմ»։ Մատթ. ԻԶ. 27. 28: «Ար ուտէ զհացս զայս, կեցցէ յաւիտեան»: «Ար ուտէ զմարմին իմ և բմպէ զարիւն իմ՝ լիս բնակեսցի. և ես ՚ի նմա»։ Յովհ. Զ. 59. 57:

2.) Ի՞նչպէս է նա — Սրբագործեալ Հացի տեսակաւ ընդարձակ այն խոր- գունուում է և ճաշակուում Քրիստոսի հարբը և ո՞րն է Սուրբ Մարմինը. սրբագործեալ զին- խորհրդոյն նի-նը. ույ տեսակաւ ընդունուում է և ճաշակուում Քրիստոսի Սուրբ Արիւնը. «Նշանակաւ Հացին տուեալ լինի քեզ մարմին և նշանակաւ զինուո՞ տուեալ լինի քեզ արիւն»։ Ոսկեբ. ԻԳ. Աառ:

Նիւթն է բաղարջ հաց՝ որ բաղարջակերաց եօթնեակն էր և անապակ զինի՝ որովհետև ջրոյ յիշատակութիւն չկայ. «Առեալ զհաց ՚ի սեղանոյ անտի՝ յայտ է թէ բաղարջ, քանդի առաջին օր էր բաղարջակերացն, ասէ, այս է մարմին իմ»։ Ղնորհ. թղթ. առ Ման. կայսր: «Քրիստոս... էառ ՚ի ձեռս զինի, և ասաց. այս է արիւն իմ, և անուն ջրոյ ոչ բրնաւ յիշատակի»։ Ղնորհ. նոյն թղթ:

3.) Յրջորջման ա. Հաղորդութիւն. բ. Հաց բեկեալ. խորհրդոյն. օրհնութիւն, զօհութիւն. գ. պատարագ. գ. Տէրունական Ընթրիք. և. խորհուրդ:

4.) Պայմանք որ- ա. Կատարեալ զղջումն. բ. Աշմա- ժանասոր հաղոր- լիտ խոտովանութիւն. գ. Կենդա- դո-նեան. նի հաւատք գ. Կատարեալ փափագ. և. Հոգևոր և մարմնաւոր պատրաստութիւն:

5.) Պատարագի Գատարագ երեխայից և պատարագ Բաժանմանը և Արժանաւորաց ՚ի Հաղորդութիւն. ա- փոխորդու-նի-նը. ռաջինը՝ սկզբից մինչև վերաբերման պատրաստութիւնը, իբրև ունկնդրու- թիւն Քարողից: Մարգարէական և Առաքելական թղթոց, Սուրբ Աւե-

տարանի և Հաւատոյ դաւանութեան,
երկրորդը՝ Աղջոյնից մինչև վերջին
Աւետարանը, իբրև 'ի հաղորդութիւն
Սուրբ Խորհրդոյն:
Փոխարկութիւնը կամ գոյափոխու-
թիւնը կատարուած է «Սուրբ Սուրբ»-
ից մինչև «Հոգի Աստուծոյ» աղօ-
թական երգը:

6.) Օգոստոսի շաբաթը մասնակից են մեա-
զորդութեան սր- սան առաքելոց. իսկ անարժանք,
ժամատարաց և վր- Յուդայի և իսաչհանուացն. առաջինք՝
նաև անարժաններն. միանում են Յիսուսի հետ և հաղոր-
դակից են, որպէս չարչարանաց՝ նոյն-
պէս և փառաց. երկրորդք՝ բաժան-
ւում են Յիսուսից և զրկւում են Յի-
սուսի հաղորդակցութիւնից: «Որ ու-
տէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն
իմ, ունի զկեանս յաւիտեանականս.
և ես յարուցից զնա յաւուրն յետ-
նում»: Յովհ. Զ. 55: «Այսուհետև
որ ուտիցէ զհացս, կամ զբաժակս
Տեառն անարժանութեամբ, պարտա-
կան եղիցի մարմնոյ և արեան Տե-
առն: ... Զի որ ուտէ և ըմպէ ա-
նարժանութեամբ՝ զատաստան ան-
ձին իւրում ուտէ և ըմպէ, զի ոչ

խորէ զմարմին Տեառն»: Ա. Կորնթ.
Ժա. 27. 22:

ԻԱ. Տոմն.

ՊՍԵԿ ԿԱՄ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

1.) Նշանակութիւն. Առն և կնոջ միաւորութիւն. փո-
խադարձ ազատ հաճութեամբ, ա-
ղօթքով և եկեղեցւոյ օրհնութեամբ,
իբրև մի մարմին. և ցմահ անբա-
ժան. «... և եղիցին երկուքեան 'ի
մարմին մի»: Մատթ. ԺԺ. 6.

2.) Խորհրդ- Պսակի. ա. Հիմք ընտանեկան, հասարակա-
կան և մարդկային և սոսկասարակ
ընկերական կազմակերպութեանց. սե-
րընդական յառաջախաղաց աճեց-
մամբ. «Աճեցէք և բազմացարուք և
լցէք զերկիր»: Խննդ. Գ, 28: Բ.
Միաւորութիւն Քրիստոսի ընդ եկե-
ղեցւոյ. յաճումն արքայութեան որդ-
ւոց. «խորհուրդս այս մեճ է. բայց
ես ասեմ 'ի Քրիստոս և յեկեղեցի»:
Եփես. Ե. 32.:

3.) Պայմանական- ա. Փոխադարձ ազատ հաճութիւն
բանականութեան խոր- փեսայի և հարսի համաձայնութեամբ

հրդոյս.

և օրհնութեամբ ծնողաց. բ. կատարեալ հասակ խօսեցելոց. գ. ֆիզիքական կատարելութիւն երկուցունց. դ. Եկեղեցական օրէնքներով արգելուած ազգականութիւն կամ արենակցական խնամութիւն չունենալ, ե. վկաների առաջին և յայտնի օրհնութեամբ կարգաւոր պաշտօնէի կատարուած. զ. միակնութիւն:

4.) Պարտաւանդաւորութիւն. ա. Պարտիք ամուսնեացն — Քրիստոս Քրիստոս ի խորհրդիս. և Եկեղեցի. «այլ սնուցանէ և դարմանէ զնա. որպէս և Քրիստոս զԵկեղեցի»: «Այլ որպէս և Եկեղեցի հնազանդ լինի Քրիստոսի՝ նոյնպէս և կանաչք իւրեանց արանց յամենայնի» Եփես. ե. 29. 24:

բ. Պարտիք ծնողաց առ որդիս՝ Համարել իրենց որդիքը իբրև զրաւականք՝ տրուած Աստուծուց սնուցանելու և դաստիարակելու յօգտակար անդամութիւն հասարակութեան և յորդիութիւն արքայութեան. «...պարծանք որդուց հարք իւրեանց»: Առակ. Ժէ. 6: «Հարք մի զայրացուցանէք զորդիս ձեր. այլ սնուցանիջիք զնոսս իւրատու Տեառն»: Եփես. Զ. 4:

գ. Պարտիք որդուց առ ծնողս — Հնազանդութիւն. «Լուր որդեակ իւրատու հօր քո և մի մերժեր զօրէնս մօր քո: Զի պսակ շնորհաց ընկալցիս ՚ի գլուխ քո և մանեակ ոսկի ՚ի պարանոց քում»: Առակ. Ա. 8. 9: Հաշուէտուութիւն և հաշուառութիւն ամուսնեաց առ իւրարս և ծրնողաց առ որդիս հաշուառութիւն և որդուց առ ծնողս հաշուէտուութիւն:

ճ. Վերահսկում. Առաջին պսակն Աստուածազիր է և իւրինական. երկրորդն՝ ներելի և զիջողաբար, երրորդն՝ պարականոն և չորրորդն՝ խողային. «Առաջին ամուսնութիւնք օրէնք են. երկրորդն ներումն և զղջումն. երրորդն՝ պարականոն. որ ոք զայս թիւ անցանէ՝ խողային է գլխովին»: Գրեգ. Աստ. ճառ. Լէ:

ԻՅ. Տոմս.

ԿԱՐԳ ԿԱՄ ԶԵՌՆԱԿՈՒԹԻՒՆ

1.) Նշանակում. Եկեղեցուց սրբարար խորհուրդ է,

և Հասարակութիւն. որով ընծայեալը ընտրուելով ժողովրդից և քննուելով եպիսկոպոսից՝ որից և ձեռնադրուելով և օծուելով՝ կարգուում է ՚ի պաշտօնէութիւն Յկեղեցւոյ և ՚ի հովուութիւն ժողովրդեան. և հաստատեց այս խորհուրդը Յիսուս Քրիստոս Ձիթենեաց լերան վերայ ՚ի Համբարձմանն. «Ետ զձեզ Հոգին սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ Տեառն». Գործք. Ի. 28: «Մի անփոյթ առնե՛ր զշնորհացդ որ ՚ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ՚ի ձեռնադրութենէ երկնցութեան»: Ա. Տիմ. դ. 14: «Եհան զնոսա ՚ի Բեթանիա, և ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա»: Ղուկ. ԻԳ. 49:

2.) **Ձեռնադրութիւն**— Առաքելները ՚ի գործ եկեղեցւոյ Ձեռն չեւ Առաքել կարգի պաշտօնէութեան հրաւիրում լակն և Տէր Ժոէին այնպիսիներին՝ որոնք ՚ի Սրբոյ Տաննէն իւր օրհնեաց զնոսա»: Ղուկ. ԻԳ. 49: Հոգւոյն կկոչուէին և ապա աղօթքով կձեռնադրուէին. իսկ առ մեզ՝ դարձեալ Առաքելական սահմանադրութեան համաձայն, միայն Հոգւոյն Սրբոյ իջման զգալի նշանաց փոխանակ՝ կատարուում է ձեռնադրութիւնը

օժմամբ սրբալոյս միւռօնի ընծայելոյ ճակատն ու աջը. «Մինչդեռ ՚ի պաշտաման Տեառն կային և պահէին, ասէ Հոգին սուրբ. որոշեցէք ինձ զՏեառնաբաս և զՍողոս ՚ի գործ յոր կոչեցեալ է իմ զգոսա. յայնժամ պահեալ և աղօթս արարեալ, եգին ձեռն ՚ի վերայ նոցա և արձակեցին»: Գործք. Ժգ. 2. 3: «Մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հանդեալ Հոգին սուրբ ՚ի վերայ ամենեցուն, որ լսէին զբանն»: Գործք. Ժ. 44:

3.) **Խորհրդոյն ա. Առաքելային հոշոմն**. «Ինքեանք նախ արժանաւոր լինելու փորձեցին. և ապա ՚ի պաշտօնն պայմանները և մատիցեն. զի անարատք լիցեն»: Ա. Խորհրդային հոգի. Տիմոթ. Գ. 10:

բ. **Առաքելային հոգի**. «Եւ մի կցորդք լինիք անպտուղութեան գործոցն խաւարի. այլ մանաւանդ յանդիմանեցէք»: Եփես. Ե. 11: «Այլ դու զրուարթ կաց. յամենայնի ճգնեաց. զգործս աւետարանչի գործեան. զպաշտօն քո կատարեալ կալ»: Բ. Տիմ. Գ. 5:

գ. **Հոգւոյն սուրբ Գրոց**. «Զի շրթունք քահանային զգուշացին զիտու-

թեան. և օրէնս խնդրեցեն ՚ի բե-
րանոյ նորա. զի հրեշտակ Տեառն
ամենակալի է»: Մաղաք. Բ. 7: «...զի
դու զգիտութիւն մերժեցեր, մերժե-
ցից և ես զքեզ. զի մի ևս քահա-
նայացիս ինձ...»: Ովսէ. Գ. 6:

դ. Միտիմ ընդդռնիւն և Բարի Հիշոյո-
ւիւն. «Այլ պարտ է նմա զվկայու-
թիւն բարի և յարտաքնոցն ունիլ...»:
Ա. Տիմ. Գ. 7:

ե. ԶԳուշաւոր և հրապարտչիւն ճննո-
ւիւն. ա. գիտութիւն. «Զի շրթունք
քահանային զգուշացին գիտու-
թեան...» բ. բարի վկայութեան
«Այլ պարտ է նմա զվկայութիւն
բարի և յարտաքնոցն ունել». և գ.
Հաւատի ՚ի պաշտօնն. «Այլ ունիցին
զխորհուրդս հաւատոցն սուրբ մտօք»
«...Զի որք բարեք պաշտիցեն...
շահին զբազում համարձակութիւն
՚ի հաւատն, որ ՚ի Քրիստոս Յիսուս»:

զ. Եղիսիպոսիւն ճեւեռագրուիւն. «Ձեռ-
նադրեցին նոցա ըստ եկեղեցւոյ երկ-
ցունս, աղօթս արարեալ հանդերձ
պսիօք, յանձն արարին գնտա Տեա-
ռն, յոր հաւատացեալն էին»:



0025940



2013

